

տար, որ սեղանի վրայ փոխանակ հաց-կատակաց ծաղրածութեանց՝ հրաման տան «ղպրացն ժողովել, զգիրս աստուածեղէն օրինացն առնուլ եւ ընթեռնուլ» (Մտթ. Ա, 696): Իսկ ասոր ծագումն աւելի հին է. հեթանոս ուսումնասէր Հոովմայեցիք երաժշտութեան ու գուսանութեանց հետ կը կարգային նաեւ նշանաւոր հեղինակներ (Ֆլեօր. 329), ինչ որ նմանողութեամբ մեր քով ալ պատահեր է երբեմն. Բ Տիգրանայ որդին Արտաւազդ եւ Պարթեւաց Ուրողէս թագաւորն իրարու խնճոյից մէջ յունարէն քերթուածներ կը կարգային (Պլտ. Գ, 138): Եւ այդ պահուն անշուշտ կ'անցընէին կէս մը լուռ ունկնդրութեամբ եւ կէս մ'ալ խորհրդածելով մատենագրաց վրայ: Հեսեանց գահերէցն ալ Ս. Գրոց մեկնութիւն ու խրատ կը խօսէր իւր ճաշակցաց, ու կ'երգէին եւս (Փիլ. Ճոք. 27-9): Վերջապէս բոլոր այս օրինակաց մէջ լռութիւնն իրրեւ լռութիւն չի յարգուիր, այլ հետեւանքն է ընթերցման կամ խրատու եւ կարճատեւ:

7. — Կերակուր: — Հին ժամանակ սովորաբար շատ պարզ եղած է վանականաց սնունդը. եւ ըստ հաճոյս իւրաքանչիւր անհատի կամ մենաստանի՝ աւելի կամ նուազ խիստ: Ուրիշ խօսքով՝ մշտնջենա-